


1900

C. X. 4



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Շատերուն ծանօթ է թէ պատերազմէն առաջ, նախ Իգմիր և ապա Կ: Պոլիս, կը հրատարակուէր Աւետարեւր թերթը, որ բոլոր հայաբնակ կեդրոններու մէջ ճանչցուած էր իբր բարեկամ առաջնորդ մը:

Յիշեալ թերթին վարչութիւնը կը գտնուէր Ամերիկեան Պորտի ժրտան, հմուտ, հաւատքի տէր միսիօնարներուն կարող ձեռքբերուն մէջ: Աւետարանական համայնքին կարող անդամներն ալ իրենց օգտաշատ յօդուածներովը կը զարդարէին անոր սիւնակները: Անոնք Քրիստոնէութեան հիմնական ճշմարտութիւններուն հաւատացողներ էին. անոնք կ'ընդունէին թէ Աստուած մեր հայրն է, Յիսուս՝ փրկիչը, Ս. Հոգին՝ մխիթարիչը, Ս. Գիրքը՝ մեր հաւատքին և կեանքին հիմը, իսկ եկեղեցին՝ այս բոլորը քարոզող և սորովեցնող զլիսաւոր աստուածային հաստատութիւնը: Անոնք կ'ընդունէին թէ մարդը թէպէտ ապականուած է իր մեղքին պատճառաւ, իր այս վիճակին մէջ իսկ յաւիտեանական արժէք մը կը ներկայացնէ, և ընդունակ է կրթուելու, բարձրանալու, բարեփոխուելու և փրկուելու:

Հետեւաբար անոնք անվախօրէն կը գործածէին բոլոր օգտակար բաները, որ կը գտնուէին ընտանեան մէջ, Ս. Գրքին մէջ, պատմութեան մէջ մարդուն մարմինը, միտքը և հոգին բարձրացնելու համար:

Գիտութեան և փիլիսոփայութեան զէմ նախապաշարեալ չէին, տարբեր գաղափարներու տէր մարդերու հանգէպ ներողամիտ ողի կը տածէին. իսկ Քրիստոսի թագաւորութեան յաջողութեան վերաբերեալ բոլոր լուրերը անյապաղ կը հրատարակէին:

Աւեսաքեր ամէնուն բարեկամն էր. անոնց բարձր գաղափարականներ կը ներկայացնէր և իր բոլոր ոգիովը ճշմարտութեան ճամբան կը սորովեցնէր: Ան իր սիւնակներուն մէջ տեղ չէր տար ծաղրանքի, ուրիշներուն պատիւը արատաւորող և նկարագիրը ստորնացնող յօդուածներու: Ընթերցող հասարակութիւնը անոր պարունակութենէն անպատճառ կ'օգտուէր: Տարբեր եկեղեցիներէ ու պատկանողներն անխտիր սիրով կը կարդային զայն:

Ահա նախկին աւեսաքերը այսպիսի դատարարի, բարեկամ, առաջնորդ, քարոզիչ և խորհրդատու մըն էր: Նոր Աւեսաքերը նախկինին թանկագին անունը ժառանգելով ճամբայ ելած է, ձգտելով նոյն նպատակին:

Թերթի մը պէտքը առաջին անգամ Սուրբոյ Հայ Աւետարանական միութեան 1926, Ապրիլի ժողովին մէջ զգալի եղաւ և խնդիրը մասնախմբի մը յանձնուեցաւ որ պէտք եղածը կարգադրէ: Միութեանս հերոս գործնա Պէյրութի մէջ կատարուած ժողովին մէջ որոշուեցաւ զործին ձեռնարկել:

Թերթիս նպատակէն դուրս է նիւթական չափ ապահովել, կամ մըցիլ մեր երկիրը կամ արտասահման հրատարակուող ունէ մէկ թերթին հետ: Ան պիտի պարունակէ կրօնական

գիտական, բարոյական և առողջապահական յօդուածներ. պիտի ունենայ նաև մասեր քաղաքներու ընտանեկան ազօթքը, Կ. Ղարոյը և երկրասարդաց ընկերակցութիւնները. պիտի պարունակէ նաև եկեղեցական և աւետարանական գործունէութեան վերաբերեալ լուրեր:

Նոր Աւետարանը պիտի հրատարակուի հայերէն և հայատառ թրքերէն լեզուներով, որպէսզի ամէն կարգի մարդիկ կարենան անկէ

օգտուիլ: Արդ թերթիս սիւնակները բաց են բոլոր ուսումնասէր և զրաօր անհատներու շինիչ և օգտակար յօդուածներուն համար: Եւ կը խնդրենք բոլոր ազգեցիկ անհատներէ, քարոզիչ և հովիւներէ և եկեղեցական ժողովներէ, որ իրենց ջանքերը չխնայեն Նոր Աւետարանը տարածելու ընկերային բոլոր խաւերուն մէջ:

Կ. Յ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՔԵՋԻՔ ՀՍՄԱԺՈՂՈՎՐ

Անցեալ Օգոստոսին (9—12) տեղի ունեցաւ Քեյք Համաժողովը, Լիբանանի Սուզ-էլ Ղարպ գիւղին Սրաբ Աւետ. եկեղեցւոյ մէջ: Եկեղեցւոյ շէնքը, որ հազիւ 250 հոգի կրնար պարփակել, կը լեցուէր միշտ ունկնդիրներու հոծ բազմութիւնով մը: Խիստ հետեքրքրական երեւոյթ մըն էր տեսնել Անգլիացիին, Ամերիկացիին, Գանատացիին, Դանիացիին, Հայը, Արաբն և Տիւրքին, Օրթոտոքս Յոյնը, Բողոքականը, Լուսաւորչականն ու Կաթոլիկը քով քովի նստած, որոնք ուշադիր մտիկ կ'ընէին Աստուծոյ պատգամաբեր Վեր. Մարթինի: Այս վերջինը զրկուած էր Անգլիայէն Քեյք Համաժողովին կողմանէ, Սուզ-էլ Ղարպի ժողովին նիստերուն մէջ քարոզելու համար: Համաժողովը ունեցաւ ութը զուամբողջութեամբ, օրական երկու անգամ, ամենուն մէջ ալ միակ խօսողը Վեր. Մարթինն էր: Իւրաքանչիւր ժողովը կը բացուէր կարճ պաշտամունքով մը, որ կ'աւանջնորդուէր Պէյրուսի շրջանը գտնուող այլեայլ միսիօնարներու կողմէ:

1875ին Անգլիոյ Սկոթական սահմանագլխին մօտ Քեյք (KESWICK) բնուած վայրը, Անգլիացի հոգեւոր հովիւ մը, Հատֆորտ Պրթըրսպի անուն, քանի մը Ամերիկացի հովիւներու ընկերակցութեամբ, ազօթաժողով մը ըրաւ: Պրթըրսպին ասկէ խորապէս ազդուած սկսաւ այդ թուականէն ի վեր ամէն տարի նոյն տեղը, Յուլիսի առաջին շաբաթը, ազօթաժողով ընել, որ բոլոր փափաքողներուն և բոլոր հոգեւոր գործիչներուն բաց էր: Այսպէս հետզհետէ նեղ շրջանակի մը մէջ ըս-

կըսած այս ազօթաժողովը տարիներու ընթացքին համաժողովի մը ձեւ առաւ, որուն մասնակցեցան մեծ թուով անձեր աշխարհի ամէն կողմերէն և տարբեր եկեղեցիներէն: 1925 ին սոյն համաժողովին յիսնամեակը տօնուեցաւ: Է'ն նշանաւոր քարոզիչներ խօսեցան այդ առթիւ, երբ Ս. Հոգիին ներկայութիւնը զօրաւոր կերպով զգալի եղած էր և բոլոր մասնակցողները խորապէս ներշնչուած էին:

Այս համաժողովին բուն նպատակն է հոգեւոր զործիչները հոգեւորապէս սնուցանել և զանոնք արթնցնել իրենց մեծ կոչումին մասին: Համաժողովը սովորութիւն ըրած է աշխարհի այլեայլ եկեղեցիներուն մէջ իրենց կողմէն զրկուած վստահելի անձերու միջոցաւ համանման ժողովներ սարքել: Ահա այս նպատակի համար զրկուած անձերէն մէկն էր Վեր. Մարթին, որ տարիներէ ի վեր Լոնտոնի մօտակայ տեղի մը նշանաւոր եկեղեցիներէն մէկուն հոգեւոր հովիւը եղած է և այս անգամ Արեւելք զրկուած էր Եգիպտոսի և Սիւրիոյ մէջ այսպիսի ժողովներ սարքելու համար:

Առաջին զուամբողջութեամբ Վեր. Մարթին հետեալ կերպով բացատրեց համաժողովին նպատակը. «Մենք պէտք ենք աւագ բժիշկի կողմէ անձնական քննութեան ենթարկուիլ: Երբ Աստուծոյ դարմանատունը մասնեց և Ան մեր հոգիները բարւոք վիճակի մէջ չի գտնէր և կամ քիչ մը տկար կը գտնէ մեզի կազդուրակ (TONIC) մը կուտայ: Սակայն երբ որ հիւանդ վիճակի մէջ գտնէ, այն առանհաւանաբար մեր վրայ գործողութիւն մը կատարել պիտի ուզէ, որուն հաւանեալ էնք:»

Վեր. Մարթինի քարոզներէն հետեալ կէտերը ուշագրաւ են, որոնք կրնան օգտակար ըլլալ մեր հոգեւոր կեանքին համար:

1. Եղիայ Մարգարէ Աստուծոյ գործին համար շատ նախանձախնդիր էր և Անոր՝ կենդանի վկան: Իբր Բրիստոնեաներ՝ մենք ալ նոյնպէս պէտք է ըլլանք. աշխարհի հակառակ բանի մը հետեւ վիպերու կոչուած ենք, ուստի մեր կոչումին հաւատարիմ մնանք:

2. Աստուած Եղիային ձեռքովը շատ մեծ զործեր կատարեց, որովհետեւ Եղիայ իրեն հնազանդող զաւակ մ'էր առնէր գնով: Եթէ երբեք Եղիայն չէր հնազանդեր Աստուծոյ, Ան զինքը պիտի ծաղկեր եւ դարակի վրայ պիտի դնէր: Անհնազանդ Բրիստոնեաներու հետ ալ նոյնպէս կը վարուի Աստուած:

3. Շատ անգամ մենք Յիսուսի տալու պատրաստ կ'ըլլանք մեզի պատկանող շատ մը բաներ, վերապահելով մեզի մեր հոգիները: Սակայն Յիսուս մեր ունեցածները չէ այլ մեր հոգիները կ'ուզէ:

4. Յիսուս միշտ կը պահանջէ որ իրեն հետեւողները իրեն սիրոյն համար յօժար ըլլան իրենց «ծանրագին խղի շիշ»ը կոտորելու, որ պէս զի անոր մէջի անուշահոտութիւնը զուրս թափի: Ոմանց «ծանրագին խղի շիշ»ը իրենց համարութիւնն է, ուրիշներունը իրենց վայելչաբարութիւնը կամ հարստութիւնն է:

5. Բրիստոնեայ եկեղեցիին արդի վիճակը կը նմանի նաւու մը որուն մէջ ջուր մտած է: Նաւ մը լաւ է մինչեւ այն ատեն երբ ձուլու վրայ կը քալէ: Սակայն երբ անոր մէջը ջուր լցուի անպայման կ'ընկղմի: Նոյնպէս ալ երբ որ աշխարհը եկեղեցիին մէջը մտնէ և անոր իշխէ, ահա այն ատեն եկեղեցին կը քայքայուի: Ուստի Բրիստոնեայ եկեղեցին պէտք է իր մէջէն արտաքսէ աշխարհը եթէ կուզէ ազատիլ քայքայումէ:

6. Բրիստոնեայ եկեղեցիին իւրաքանչիւր անգամը պէտք է մաքրուի իր մեղքերէն Տիրոջ կրակովը: Եղիայի օրինակէն (Ի. թագ 18: 36—39) կը տեսնենք որ Աստուծոյ ողջակէզ մատուցանելու համար ամէն բան պատրաստեց և ողջակէզն ալ մատուց: Ահա ան ատենը Տիրոջմէ կրակ իջաւ, և ողջակէզը ու փայտերը և քարերը ու հողը այրեց, ու փոսին մէջի ջուրն ալ լափեց: Արդ մեր մեղքերէն կը փրկուինք մի միայն Տիրոջ կրակովը, որ մեր սրբաւորուն մէջ կուգայ երբոր մենք մեր ետերը կը զոհաբերենք:

Մենք քաջ կերպով վստահ ենք որ այս գումարումները մեծապէս նպաստելին ներկաներուն հոգեւոր կեանքին զարգացումին. քանզի համաժողովի ընթացքին բացարձակապէս զգալի էր Աստուծոյ ներկայութիւնը, և որուն կրակը հոն սրտերուն մէջ կը կատարէր իր սքանչելի մաքրագործումը:

Ա. Յ. ՀԱՏԻՏԵԱՆ

ԳԵՐԱԳՈՅՆ ԱՐԺԷՔՆԵՐԸ

Բրոք. Բապըթ Միլլքան, աշխարհի մեծագոյն գիտնականն! րէն մէկը, կ'ըսէ. «Իմ կարծիքիս համեմատ աշխարհիս մէջ է՛ն կարեւոր երկու զազափարներ կան, որոնցմէ կախում ունի աշխարհի բազմը. և ես չեմ քսեր թէ է՛ն կարեւորը գիտական յառաջդիմութեան կարելիութիւններուն հաւատալն է: Աշխարհիս մէջ է՛ն կարեւոր բանն է հաւատալ բարոյական և հոգեւորական արժէքներու իրականութեան: Աշխարհային պատերազմը եղաւ անոր համար որ մենք ասոնց հաւատալէ զազրեցանք. և եթէ հիմայ մենք կերպ մը չենք գտներ այս հաւատքը վերստանալու և զօրացնելու, այն ատեն գիտութիւնը արժէք մը չպիտի ունենայ»:

* * *

Մարդիկ իրենց կարծածէն շատ աւելի ստիժներ կ'ունենան կեանքի մէջ մեծնալու համար. միայն թէ պէտք է զանոնք գնահատել եւ զործածել գիտնալ:

ՆԿԱՐԱԳՐԻ ԺԱՌԱՆԳԱՆՈՒԱԻՆԸ

Նկարագիրը՝ որ մեր երիտասարդութեան տարիներուն մէջ կը կազմենք, երկու մասերէ կը բաղկանայ մին ստացական, որ անհատը ինքը կը շինէ ու որուն ինքը պատասխանատու է, իսկ մէկալը ժառանգական, որ անհատը իր անցած սերունդներէն կը ժառանգէ: Նկարագրի մասամբ ժառանգական ըլլալը այլեւս անուրանալի իրողութիւն մը եղած է. ծնողաց անտեսանելի նախաքիջները՝ ոչ թէ միայն ծնողաց, այլ նախահայրերու ու մամերու նկարագրներն ալ միասին քեզի բերած են: Այժմ գիւրահասակնալի է որ, ինչպէս մենք անցած դարերու մէջ ապրած սերունդներու նկարագրները ժառանգած ենք, նոյն կերպով մենք ալ մեր կարգին, այս ժառանգական նկարագրի վրայ, մեր ստացական

նկարագրը աւելցնելով, անիկա յոռի կամ բարի ապագայ սերունդներուն պիտի աւանդինք. այնպէս որ մեր նկարագրները դարերու հոլովման մէջ ուրիշ կեանքերու մէջէն կըրկին և կըրկին արծազանգ պիտի տան:

Այս կեանքի մէջ մենք կրնանք ապրիլ ու գործել այնպէս ինչպէս որ կ'ուզենք. մեր կեանքին պարագաներն ու մանրամասնութիւնները կրնան մոռցուիլ, երբեմն ալ զազոտի մնալ. բայց վստահ ըլլալու ենք որ անոնց հետքը և հետեւանքները ժառանգութեան անխուսափելի օրէնքներով պիտի փոխանցուին սերունդէ սերունդ: Այս օրէնքներով միայն կարելի է միկնել Ս. Գրոց սոյն պատգամը որ կ'ըսէ. «Եւ Տէր Աստուածն եւ որ կը հաւուցանեմ հայրեւոյն անօրէնութիւնը որդիներուն վրայ մինչեւ երբորդ ու չորրորդ սերունդները.»

Հայր մը կը մեռնի ու իր զաւակներուն տուն, զրամ ու կալուածներ կը թողու. ահա շատերուն համար ժառանգութիւնը ասկից անդին չ'անցնիր. ո՛չ, ժառանգութիւնը անկէ շատ աւելի ընդարձակ նշանակութիւն մը ունիւ. Հաւ համոզուելու ենք որ կան բաբոյական և անտեսանելի ժառանգութիւններ, որոնք նիւթականէն աւելի ճշմարիտ աւելի իրական և աւելի կարեւոր են: Ծնողներ իրենց զաւակները նիւթական ժառանգութիւնէն քիչ կրնան զրկել բայց նկարագրի ժառանգութիւնէն՝ ոչ. անոնք անպատճառ զաւակներու վրայ պիտի արտայայտուին:

Իժեկական անժխտելի ճշմարտութիւն մ'է թէ ծնողաց առողջութիւնը, տկարութիւնն ու հիւանդութիւնը յաճախ զարմանալի ճշդութեամբ մը ժառանգական են. այս պատճառով է որ ապահովագրութեան ընկերութիւնները ընտանեաց անդամներուն հիւանդութիւնները հասկնալու շատ հետամուտ են:

Որչափ ուշադրաւ է զիմացի ու մարմնոյ ժառանգականութիւնը, զաւակները՝ դէմքով ու մարմնով իրենց ծնողաց ո՛րչափ կը նմանին. անոնք երբեմն մեծ մայրերու մեծ հայրերու նմանութիւնը կը կրեն. մի՛ գարմանաք երբոր ըսեմ որ անոնք երբեմն ալ 150 տարի առաջ ապրած նախահայրերու ու մամերու ճիշդ ու ճիշդ նմանութիւնը ունին: Մէն մի գերդաստան ունի իրեն յատուկ ակռաներ, ձեռքեր, ոտքեր ու մագեր: Ատամնարոյժներ յաճախ ընտանիքի մը անձանօթ մէկ անգամը անոր

ակռաներէն կը ճանչնան: Հայկական բրոնզադթի ժամանակ յափշտակուած և անձանօթ դարձած երեխաներ, որչափ անգամներ իրենց զիմացէն, գլխու ձեւէն, ակռաներէն ու մատերէն ճանչցուեցան:

Մտային կարողութիւնն ու տաղանդները նոյնպէս ո՛րչափ ժառանգական են. մեծահրուշակ Գերման երաժշտագէտ Պախի ընտանիքէն երկու դարէ ի վեր միշտ նշանաւոր երաժշտագէտներ սերած են: Գաղիացի ծանօթ Բօշիլտ գերդաստանը նոյնպէս երկու դարէ ի վեր նշանաւոր ելեմտագէտներ տուած է:

Ուրեմն նիւթական ժառանգութեան պէս եթէ կայ զիմացի ու մարմնոյ ժառանգութիւն մը, եթէ կայ առողջութեան ու հիւանդութեան ժառանգութիւն մը, եթէ կայ նաեւ մտային կարողութեան ժառանգութիւն մը, ուրեմն ալ աւելի վստահութեամբ կրնանք ըսել որ կայ նկարագրի ժառանգութիւն մը: Ամերիկեան կառավարութիւնը նկարագրի ժառանգութեան վրայ իւր ունեցած խոր համոզման համար է որ իր սճրագործներուն ծնընդարերութիւնը արգիլելու համար ամեն միջոց գործածելու չվաբանիր. քանզի նա քաջ գիտէ որ սճրագործները՝ սճրագործներ, գողերը՝ գողեր կը ծնին:

Ով կարգաւոր, ուրեմն քու երիտասարդութեան տարիներուդ մէջ կազմած նկարագրիդ, քեզի համար կենաց և մահու չափ կարեւոր խնդիր մը կը դառնայ: Ղուք, պէտք է հաւատաս որ եթէ քու ոտքերդ ծուռ ճամբաներ յաճախելու վարժուած են, քու զաւակներուդ ոտքերը նոյն ճամբաներէն աւելի զիւրաւ պիտի քալին, եթէ դուն ոգելից ըմպիլիւնը գործածելու սովորութիւն ունիս, քու թոռներդ այդ զաւաթներուն ալ աւելի զիւրութեամբ պիտի մօտենան. եթէ խարել, սըտիլ ու բամբասել քեզի համար սովորական բաներ եղած են, վստահ եղիր որ ապագայ սերունդներուդ նոյն փորձութեանց աւելի զիւրաւ պիտի իյնան:

Ուստի քու ծնողքներէդ ժառանգած նկարագրիդ մէջ եթէ կան յոռի բաներ, անոնք ուղղելով և անոնց վրայ բարի բարքեր աւելցնելով յետագայ սերունդներուն ազնիւ նկարագրի մը աւանդել քու սուրբ պարտականութիւնդ ըլլալը երբէք մի մոռնար:

ԲԺԻՇԿ Ա. ՃԵՊԷՃԵԱՆ

ԸՆԹԱՑԻԿ ԿԵԱՆՔ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒԻՐ

Մանչերու Բարձրագոյն Վարժարանի նախագահը Տոքթ. Ճ. Մէրիլ, «Հիմնադիրներու Օրուման» առթիւ հետեւեալ տեղեկութիւնները հաշորդեց. 1926—27 դպրոցական շրջանին 90 անձեր, որոնցմէ 11ը հայ, դրամական նուիրատուութիւնները բաժնէ հաստատութեանս. քիմիական և բնագիտական նոր գործիքներու ճոխ կազմով մը դպրոցը օժտուած է, գնուած է նաև բատիօ մը որ անակնկալ նորութիւն մը եղաւ: Անցեալ տարւուան աշակերտութեան թիւը եղած է 164, այս տարւուանը՝ 209, ուսուցիչներու թիւն է 17 որոնցմէ չորսը այս տարի հրաւիրուած. դպրոցը մէկ տարի ալ բարձրացուած է պաշտօնակիով Սօֆօմօր կարգը:

Ազգկանց Բարձր. Վարժարանը այս տարի ունի 123 աշակերտուհի և 11 անդամէ բաղկացեալ ուսուցչական մարմին մը: Տնօրէնուհին Միս Թորմէն, աւարտած ըլլալով իր արձակուրդի շրջանը, վերադարձած և վերլուտանձնած է իր նախկին գործը:

Հալէպի Ազգիկիյէ Հայ Աւետ. եկեղեցւոյ դպրոցներուն աշակերտութեան այս տալ ուսան թիւը 250, ուսուցչական մարմինը կը կազմեն 10 վարժուհիներ և երկու ուսուցիչներ:

Հալէպի Քէմփին Հայ Աւետ. եկեղեցիին դպրոցները այս տարի ունին 303 երկուս աշակերտներ 11 վարժուհիներու և տնօրէնի մը խնամքին տակ: Հալէպի երկու Հայ Աւետ. եկեղեցիներուն մէջ կսգմակերդուած է «. Զանից ընկերութիւններ, պատանեաց և բրիտանարգաց բաժիններով, մանչիլու և ազգիկներու համար գատ գատ: Պատ: Ա. Յ. Հատիտեանի ջանքերը գնահատելի են այս մասին: Երկու եկեղեցիներու այս բոլոր միութիւնները կ'ունենան պարտրական ընդհանուր ժողովներ: Այս անգամ, հոկ. 16ին, Քեմփի եկեղեցիին մէջ տեղի ունեցաւ այս գումարումը, ուր Միս Թորմէն խօսեցաւ իր ուղեւորութեան մասին և Քրիստոնէութեան ծաւալման մասին Արեւելքի կարգ մը երկիրներու մէջ: Ազգիկիյէի Ն. Ք. Զանից ազգիկներու և մանչերու բաժինները չորս շաբաթը անգամ մը կ'ունենան խառն հաւաքոյթ մը, ուր 100ի մօտ 17—22 տարեկան երիտասարդներ կը վայելեն,

նուազ, խմբերգ, և ատենախօսութիւն մասնաւորապէս հրաւիրուած անձերու խորմանէ: Երկու անգամէ ի վեհ հոն կը խօսի Պր. Տ. Խըրրուեան «Պաշտօնականները և Եկեղեցին» նիւթին վրայ: Նոյն եկեղեցւոյ ուսումնասէր հովիւը, Վեր. Կ. Յ. Յարո թիւնեան, սկսած է խօսիլ Նոր Կտակարանի դրականութեան մասին, միջնաբերդայ աղօթածողովներուն երկրորդը յատկացնելով այս նպատակին: Թուրքիոյ և Սուրիոյ սահմանագծին վրայ կարգ մը աննշան գիւղեր և երկաթուղիի կայարաններ պատիկ քաղաքներու երեւոյթը առած են, վաճառականութեան համար հոն հաստատուող քրիստոնեաներու շնորհիւ:

Տեղ	Գրկատ.	Աշկրտ.	Ուսցչ.	Կրօն.գործ.
Ազէզ	1000 հայ	100	3	Հոգ. Կարբնր.
Ճարապուս	1200 »	156	5	1 քրդ. 1 քհն.
Սրս քիւսար	1000 »	—	—	—
Բալէկլի	10 »	—	—	—
	.00 ասորի			
Հասիճէ	250 հայ	—	—	—
Թէլ Աւրտտ	200 »	—	—	—
	100 ասորի			

Ըստնց բնակիչները կը կազմեն կարգաւ Քիւսիք, Պէքէճիքցիք և Այնթապէք, Ուրֆա իք, Վիրանշէկիցիք և Տիյարպէքիցիք: Բացի գիւղերու մէջ ցրուածներէն 3000էն աւելի հայութ. մը կայ որ գրկթէ հորիկ է կըրթական և կրօնական սնունդէ բացի ճարապըլուսէ: Ազէզի մէջ ալ Կ. դպրոց մը բացուած է 100 աշակերտներով և երեք ուսուցիչներով. Հոգեւոր եղբայրութիւն մը կը սարքէ կրօնական ժողովներ: Ճարապուսի Հայ Աւետ. եկեղեցւոյ քարուղիը Պր. Հապիպ Տարապէսեան ուսումնի համար Սթէնքի Միւլ ալ Րիշիճընը գնաց, և իրեն յաջորդեց Պատ. Յ. Կիւրլէքեան, Պիթիասի նախկին քարուղիը, — Օր. Պետիլ Պիյորն, Նորվեկիացի հայասէր միսիոնարուհին, այժմ քաղաքս կը գտնուի: Մտազիր է 2—12 տարեկան տաանեակ մը տըկաւրակազմ մանուկներ առնել և ֆիզիքապէս ու ու հոգեւորապէս զանոնք կազդուրել և պօրացնել վերջ վերադարձնել իրենց տէրերուն և ապա նորիւր առնել: Օր. Պիյորն 1903—16 Մէզրէ (Խարբերդ) գործած է: 1916—20 Նորվեկիոյ մէջ հայանպաստ գործունէութիւն ունեցած, Լենինական (Հայաստան) պատիկ որբանոց մը վարած է, 926ը Նորվեկիա անցուցած ուսկից Սթէնքի ճամբով Հալէպ եկած է:

ԹԱՔԴ ԵՒ ՏԱՂԱՆԴ

Տաղանդը բան մ'է, բայց թաքըլը ամէն բան: Տաղանդը լուրջ, ծանր, վսեմ և պատկառելի է. թաքըլը այս ամբողջն է և ալ աւելին: Վեցերորդ զգայարանք մը չէ ան, բայց հինգիւն ալ կ'հանքն է: Յատակատես աչք, արագալուր ականջ, դատող ճաշակ, սուր հոտառութիւն և աշխոյժ հպում է ան: Բոլոր հանելուկները կը լուծէ, բոլոր զժողովրդներն կը յաղթէ, բոլոր արգելքները կը վերջնէ: Ան օգտակար է ամէն տեղ և ամէն ժամանակ. ան օգտակար է առանձնութեան մէջ, քանզի մարդը գէպի աշխարհ կ'առաջնորդէ. օգտակար է ընկերութեան մէջ, քանզի աշխարհի մէջէն անոր ճամբայ կը գտնէ: Տաղանդը ոյժ է, թաքըլը՝ ճարտարութիւն. տաղանդը ծանրութիւն է, թաքըլը՝ թափ, տաղանդը յարգելի կ'ընծայէ մարդը, թաքըլը՝ յարգութիւն: Տաղանդը հարստութիւն է, թաքըլը՝ պատրաստ դրամ: Կեանքի բոլոր զործնական նըպատակներուն համար ան առաջ տաղանդ կարծէ:

Երկուքն ալ թատրոնի բեմին վրայ դէմ դրմաց դիր. տաղանդը քիզի ողբերգութիւն մը պիտի պատրաստէ, որ հազիւ կ'հանք պիտի ունենայ քիչ մը վերջը պատապարտուելու համար. մինչդեռ թաքըլը ամէն զիշեր միջոցը պիտի թնդացնէ իր յաջող գաւազաններով: Թատերական աշխարհի մէջ ո՛չ տաղանդ կը պակսի ո՛չ ալ թաքը. բայց քիչ անգամ այս երկուքը միասին կը գտնուին: Այսպէս յաջող կտորներ կ'ունենանք որոնք յարգելի չեն, և յարգելի կտորներ՝ որոնք յաջող չեն:

Փաստաբանութեան հրաւիրէ գանոնք, և թող անոնք սպառն իրենց բոլոր պաշարը օրինական մրցակցութեան մէջ: Տաղանդը իր ճամբան յատկօրէն կը տեսնէ, բայց ճամբուն ծայրը առաջին հառնողը թաքըն է: Տաղանդը նստարաններէն շատ մը զովհետեւ կ'ստանայ, բայց թաքըլը նիւթապէս կը վարձատրուի գատախաղներէն և յաճախորդներէն: Տաղանդը կը խօսի զիտնականօրէն և տրամաբանօրէն, իսկ թաքըլը՝ յաղթականօրէն: Տաղանդը կը զարմացնէ աշխարհը թէ ինչու ան աւելի արագ չի յառաջանար, բայց թաքըլը կը հիացնէ թէ ան ո՛րչափ արագ կը յառաջդիմէ: Գաղտնիքը հոս է որ ան տանելիք ծանրութիւն չունի, ան

սխալ քայլ չ'առնէր, ան հարուածը ճիշտ իր տեղը կը գտնէ. ան ժամանակ չի կորսնցնէր, իր աչքը հողմաշոյշի վրայ պահելով ամէն փչող հովէն օգուտ կը քաղէ:

Զանոնք եկեղեցիին բեմին վրայ դիր: Տաղանդը միշտ բսելու արժանի բան մը ունի, իսկ թաքըլը ապահով է բազմամրոխ ունկնդրութիւն մը ունենալու. տաղանդը լաւ անուն մը կը շահի իսկ թաքըլը՝ մեծ անուն մը. տաղանդը կը համոզէ, թաքըլը գարծի կը բերէ:

Զանոնք պալատ տար: Տաղանդը իր ծանրութիւնը կը զգայ, իսկ թաքըլը իր ճամբան կը գտնէ. տաղանդը կը հրամայէ, իսկ թաքըլին կը հնազանդին. տաղանդը հաւանութեան կ'արժանանայ իսկ թաքըլը՝ նախընտրութեան:

Ժողովի մը մէջ դիր գանոնք: Տաղանդը ժողովականներուն ուշադրութիւնը կը գրաւէ, բայց թաքըլը անոնց սիրտը և քուէները կը շահի: Տաղանդը պաշտօնի յարմար է, իսկ թաքըլը յարմարցուած. ան առանց չփումի, խաղաղօրէն և զիւրաշարժութեամբ իր տեղը գրաւելու ճարպիկութիւնը ունի: Ան ամէն բան զիտնալ կը թուի, առանց ուէ բան սորված ըլլալու: Ան անպատրաստից և անտեսանելիօրէն աշակերտած է, վարժութեան պէտք չունի: Անճարակներու շարքին մէջ կ'ընթերցէ զգանութիւն. ան չունի ո՛չ ձախլիկ ձեռք, ո՛չ խուլ ականջ, ո՛չ կոյր աչք: Ան չունի ո՛չ զարմանահրաշ իմաստութեան երեւոյթը, ո՛չ ալ խորունկութեան կերպարանքը. հասարակի մը երևոյթին տակ հանճարի մը ոյժն ու կարողութիւնը ունի:

—Անգլիերէնէ թարգմանուած

անոնց պիտի ընէ այնպէս ինչպէս որ անոնք ըրած էին ուրիշներուն. 2. 3: 3. 4: 3. 6, 7: 2) մեղք գործելու անիմաստութիւնը և պնդել թէ Աստուած մեզի հետ է 3. 9-11: 3) վաճառական մը սուրբ չէ երբ ան պարկեշտ չէ 6. 10-15: 4) Աստուծոյ պահանջը 6. 6-8:

Պէտք է նկատել թէ Միքիա կ'զիտացած է, առանձին միացած է, արդարութեան վրայ ունեցած իր համոզումներուն պատճառաւ. տես Մատթ. 5. 6. 10-12: Նկատի առ ժողովուրդի 6 կարգը իւրաքանչիւրը որոնց դէմ Միքիա քալողից: Կը համաձայնի՞նք Միքիայի. կամ կարգարացնե՞նք այս մարդիւրը: Աստուծոյ հոգին որովհետեւ կ'զմնէ 2. 7: 3. 8:

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍԵՐ

ՈՎՍԵՒ ԿԸ ԲՍԵՐՈՋԷ ԱՍՏՈՒԾՈՅ ՍԷՐԸ

Նոյեմբեր 13

Ովս. 6, 11, 14. սակեղէն համար Ովս. 6. 6:

1. Պատմական ակնարկ. հրէական պատմութիւնը կը կեդրոնանայ ազգային կեանքին մէջ պատահող տաղանայնիքը շուրջ: Իւրաքանչիւր տաղանայնիք փայրկեկին Աստուած առաջնորդ մը զրկեց, որ ստփորաբար մարգարէ մըն էր:

Ովսէէ մէկն էր այս չորս մեծ մարգարէներէն, չորոնք Աստուած Ասորեստանեան տաղանայի (Բ. Ա. 800—700) միջոցին զրկեց. այսատեաններն էր որ Նինուէի (Մուսուլ) թագաւորները կործանեցին Սամարիան, իսկ Երուսաղէմ հազիւ կրցաւ նոյն բաղդէն ազատիլ հրաշայի կերպով մը: Ժամանակագրական կարգով միւս մարգարէներն են Ամոս, Եսայի և Միքիա: Եսայի, Միքիա և Ովսէէ ժամանակակից էին:

2. Ովսեայ Պատմաբ. Ովսեայ պատգամը երկու մասերէ կը բաղկանայ. (1) Իսրայէլի անհաւատարմութիւնը Եհովայի հանդէպ պիտի պատժուի. (2) Եհովայի Իսրայէլի հանդէպ տաժաժ մեծ սէրը անոր անհաւատարմութիւնը ներկելու համար պիտի պատրաստէ զինքը Լթէ միայն ան իրեն դառնայ:

Ովսեայ Աստուծոյ սիրոյն մասին այլոք պատգամը իր ընտանեկան փորձառութիւններուն հետ սերտօրէն կապուած է: Իր անհաւատարմ կիներ Իսրայէլը կը խորհրդանշէր, եւ իր ներսը սէրը աստուածային սիրոյն խորհրդանշանն էր: (Ա. և Գ զլուխներ)

3. Մեր դատը. 2, ԺԱ. և ԺԳ զլուխները ընտրուած կրնան ըլլալ անոր համար որ տնոնք մեծ թիւով կարեւոր համարներ կը պարունակեն: Սյս համարները կը պատմեն,

1) Թէ Իսրայէլ իր հաւատքը ուրացած է եւ մեղաւոր է. 6. 4, 11. 7, 14. 1:

2) եւ կը հրաւիրեն զայն գղջումի եւ ապաշխարութեան. 6. 1—3, 14. 1—3:

3) Աստուծոյ փափաքին մասին. 5, 6. 6:

4) Թէ այն նպատակին հասնելու համար Իսրայէլի հետ իր յարաբերութեան մէջ ինչ միջոցներ կը գործածէ. 6. 5:

5) Աստուծոյ մեծ սէրը. 11. 1—4: 11. 18:

6) եւ վերջապէս արդիւնքը եւոք գու-

թի մասին. 6. (Բոլոր զիրքը կարգաւ:)

Կը գտնուի Թէ Աստուծոյ ներող սէրը թանկագին է (Ա. Պետր. 2. 7): Մեր կեանքերուն մէջ պատահած եւն զէպքեր որոնք Աստուծոյ սէրը կը խորհրդանշեն: Ասոր հետ բաղդատէ՛ ինչ որ Յիսուս ըսաւ Աստուծոյ մասին, Թէ Այն աւելի լաւ է քան հայր մը (Մատթ. 7. 11):

ՄԻՔԻԱ ԿԸ ՊԱՇՏՊԱՆԷ ՃՆՇԵԱԼՆԵՐԸ

Նոյեմբ. 20

Միք. 2. 3. 6. զլուխներ և 7. 1—16:

1. Պատմական Ակնարկ—Ասորեստանեան տաղանայի շրջանին պատկանող չորս մարգարէներէն կարելի է վերջինը Միքիան էր, տես Ամոս 1. 1: Ովսեայ 1. 1: Եսայի 1. 1: Միքիա 1. 1: հետեւեալ կարեւոր կէտերը այս մարգարէներուն քարոզութեան մէջ նկատելի են. 1) Իսրայէլի պատմութեան ակնարկում. Միքիա 6. 4, 5: Ովսեայ 11. 1—7: 2) առանց արգարութեան մատուցուած հոհերու դատապարտութիւնը. Միքիա 6. 6—8: Եսայի 1. 10—17: Ովսեայ 8. 12, 13: Ամոս 5. 21—34: 3) Իսրայէլի մէկ մնացորդը պիտի փրկուի. Միքիա 2. 2: Եսայի 10. 21: 4) Աստուծոյ պահանջը. Միքիա 6. 6—8: Ովսեայ 6. 6:

2. Միքիայի Պատգամը. Իսրայէլի մէջ շատ մարդիկ կան որոնք անարդարութիւն կը գործեն (տես մեր դասը). Անոնք պիտի դատուին: Բայց Իսրայէլի համար Եհովայի վերջնական նպատակները լաւ են: Ան փրկութիւն պիտի չնորհէ Միք. 4. 6 և 7: Ան պիտի դատէ այն թշնամիները որոնց միջոցաւ կրթած էր Իսրայէլը Միք. 4. 11—13: պիտի տայ կրօնական առաջնորդ մը 4. 1—2: և թագաւոր մը 5. 2—4: պիտի չնորհէ մեղքէ մաքրագործում 5. 10—14: խաղաղութիւն 4. 3 և 4: յաղթութիւն 4. 8: Ապա Միտն բոլոր ազգերուն առջև Եհովայի ուժին և ճամբաներուն մէկ օրինակը պիտի ըլլայ: Միք. 7. 15—17: Ամ. փոփում, 7. 18—20:

3. Մեր Դատը. Միքիա անվախօրէն կը քարոզէ Աստուծոյ դատաստանը որոշ մեղքերու և նշանաւոր մեղաւորներու դէմ, որոնցմէ են 1) արքայական ընտանիքը 2. 1, 3, 6: 2) ազնուականները 3. 1—4: 3) զործի մարդերը 6. 10 և 11: 4) դատաւորները 3. 11: 5) քահանաները 3. 11: 6) մարգարէները 3. 5—7: Ան կը յայտարարէ 1) փոխարինում. Եհովա

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋՐ

Սիրեղի փոքրիկ բարեկամներս,

Նոր Աւետարեիլի էջերէն մէկը մեզի, Սիւ-
րիահայ մանուկներու յատկացուած է, ան մե-
զի համար անտարաճոյս շատ օգտակար պի-
տի ըլլայ, իթէ գիտնանք ամենալուս կերպով
գործածել զայն: Այդ էջը Սուրբոյ ամեն լոգոսի-
րը ցրուած հայ փոքրիկ տղայոց և աղջիկնե-
րու համար միութեան գեղեցիկ կապ մը պի-
տի ըլլայ, որուն շուրջ մենք պիտի կրնանք
հաւաքուիլ երկու շաբաթն անգամ մը՝ իրարու
հետ խորհրդակցելու, խօսակցելու, հարցում-
ներ ընելու ու պատասխաններ տալու կամ ըս-
տանալու համար: Մենք երբեմն կը կար-
գանք ծառերի կամ Հնդկաստանի նման հե-
ռաւորներէն: Եւ մասին, հոն գտնուած փոքր
մանուկներու ապրելակերպի մասին, անոնց
մէջ յառաջ գալով Միսիօնարական գործերու
մասին, բայց խիստ քիչ անգամ, կամ թերեւ
երբէք՝ ոեւէ տեղեկութիւն չստանանք իրարու
վրայով: Ահա գեղեցիկ պատեհութիւ մը՝ ո-
րով այսուհետեւ պիտի կրնանք մօտէն ճանչ-
նալ զիրար, երբ մեր փոքրիկ ստորագրութիւն-
ները երեւնալ սկսին «Մանկանց էջ»ին վրայ,
ու մենք մէկգմէկու գրածները կարենանք կար-
գալ: Հալէպէն փոքր աղջկան մը հարցումին
Սուէյտիացի տղայ մը պիտի կրնայ պատաս-
խանել: Դամասկոսի մէջ եղող փոքրիկի մը
հանկուսէր Պէյրութի մէջ ուրիշ տղայ մը պիտի
լուծէ: Որքան հաճելի պիտի ըլլայ այս էջը
մեզի համար, ու որքան անհամբեր պիտի ըս-
պասենք իւրաքանչիւր նոր էջին հասնելուն,
ու որքան ախորժակով պիտի կարդանք զայն:

Մեր տան կամ զպրտցի մէջ ունեցած փոքր
գժուարութիւններու մէջ անկէ պիպի օղ-
տունք. անոր մէջ պիտի գտնենք մեր կարգ
մը մտաւոր ու հոգի որ խնդիրներուն պատաս-
խանները:—

«Մանկանց էջ»ը կարելի եղածին չափ հա-
ճելի ու օգտակար ընելու համար «Նոր Աւե-
տարեիլ»ի խմբագրութիւնը մասնաւոր կար-
գադրութիւններ լրած է, ու պիտի ընէ ապա,
զային: Այս անգամ հետեւեալ փոքր հանե-
լուկը կուտանք Ձեզի:—

Ձեռքիմ մի մասը քի ոսկիմ մի մասը:

Այս տողը Յիսուսի աշակերտներէն մէկուն
անունն է. տեսնենք թէ ով պիտի կրնայ լու-

ծել զայն: Անոնք որ կրնան լուծել թող իրենց
պատասխանները նամակի պահարանի մը մէջ
դնեն, նաեւ Առակաց գրքէն գեղեցիկ համար
մըն ալ միասին ներփակելով զայն զրկեն «Նոր-
Աւետարեիլ»ի հասցէին: Պատասխանները
պէտք է մեզի հասնին մինչև Նոյեմբեր 15.
մը՝ ու մի* մասնակցողները միայն մենք ըլլա-
լու ենք, 15 տարեկանէ վեր եղողները իրա-
ւունք չունին անոր մէջ, քանի որ «Մանկանց
էջ» միայն մանուկներուն կը վերաբերի:—

Անկեղծօրէն Ձերդ

X X X

* Հանելուկը լուծողներուն անունները պիտի
յիշուին թերթին մէջ:

ԱՌԱՋԻՆ ՎԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Գեղեցիկ պատմութիւն մը կը պատմուի
Լէյտի Օկուսթա Սթանլիի մասին: Օր մը երբ
թագուհին պալատին մէջ ընդունելութեան
մը համար պատրաստուած էր, հիւանդանոց-
ներուն մէկէն աճապարանքով քաբեր մը ե-
կաւ: Աղքատ կին մը, չոր Տիկին Սթանլին
յաճախ այցելած և միթարած էր, ծանր վի-
րաբուժական գործողութեան մը պիտի լն-
թարկուէր: Երբ վիրաբոյժները գործողութիւ-
նը կատարելու եկան և խեղճ կնոջ այդ մասին
ըսին, այն խնդրեց որ Տիկ. Սթանլին իրեն հրա-
ւիրուի: «Եթէ այն իմ ձեռքէս բռնէ», ըսաւ կի-
նը, «ես պիտի կրնամ գործողութեան դիմա-
նալ»: Տիկ. Սթանլին ճիշտ ճամբայ ելլելու վը-
րայ էր դէպի պալատը. բայց իւր պերճափայլ
հագուստը կրկնողով մը ծածկելով փոխանակ-
հոն երթալու աճապարեց դէպի հիւանդանոցը:
Այն խեղճ տառապեալին քովը նստաւ մի քանի
խրախուսիչ և զուարթացուցիչ բառեր խօսելէ
վերջ անոր ձեռքէն բռնեց, մինչև որ գործո-
ղութիւնը լմնցաւ:

Նմանապէս մեր է՛ն զբաղեալ ժամակնե-
րուն մէջ իսկ երբ լսենք Քրիստոսի, սիրոյ պար-
տականութեան ձայնը, անյայտաբար հետեւինք
անոր: